ԴԱՎԻԹ ՍՐԿ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Իմ մտքերիս զարդ փայփայած,
Վառ տենչերիս հենարան,
Դու, հոգուս մեջ լույս ճառագած՝
Իմ մայր դպրոց ճեմարան...
Ավ. Ճուղուրյան

Գեւորգյան հոգեւոր ճեմարանը Հայ Եկեղեցու սիրտն է, որտեղ կրթվում ու դաստիարակվում են Եկեղեցու ապագա հոգեւորականները: Հոգեւորականներ պատրաստելուց զատ ճեմարանը տասնամյակներ շարունակ հսկայական դերակատարում է ունեցել հայ մտավոր կյանքում: Հայ բազմաթիվ մտավորականների անուններ են կապված ճեմարանի պատմության հետ: Նրա սաներից շատերը եղել են գրականության, մանկավարժության, գիտության, հասարակական-քաղաքական կյանքի եւ այլ ոլորտների ակնառու գործիչներ, որոնք իրենց անջնջելի կնիքն են թողել հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի մեջ: Ականավոր ճեմարանականներից է հայտնի մանկավարժ, մեթոդիստ Ավետիս Ճուղուրյանը, որի գործունեության ողջ ընթացքում նկատվեց ճեմարանի բարերար ազդեցությունը:

Ավետիս Ճուղուրյանը ծնվել է 1898թ. մարտի 20-ին Վաղարշապատ քաղաքում՝ Մայր Աթոռի տպարանի գրաշար Սմբատ Ճուղուրյանի ընտանիքում: Հայրը, լինելով կրթված մարդ, մեծ ուշադրություն էր դարձնում զավակ-

ների[1] կրթությանը: Ավետիս Ճուղուրյանը գրաճանաչ է դառնում հենց հոր շնորհիվ, իսկ տասներեք տարեկանում՝ 1911թ., ընդունվում է Գեւորգյան ճեմարան: Այդ ընթացքում ճեմարանում դասավանդում էր նրա կնքահայրը՝ մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Ավետիս Ճուղուրյանը կնքահոր խորհրդով եւ հոր ցանկությամբ սկսում է երգել ճեմարանի երգչախմբում, որի խմբավարն էր Կոմիտաս վարդապետը: Նրա մեծանուն ուսուցիչները հաճախ էին հյուրընկալվում գրաշար Սմբատի հարկի տակ: Սմբատը նրանց այցը մեծ պատիվ էր համարում եւ իր զավակներին միշտ պատվիրում. «Այնպես սովորեք ու մեծացեք, որ ես այդ պատվարժան մարդկանց մոտ գլուխս բարձր պահեմ»[2]: Ավետիսը հայրական պատգամը սրտում պահած՝ մեծ եռանդով գիտելիքներ էր ամբարում: Բացի Կոմիտասից եւ Հովհ. Հովհաննիսյանից, նրա ուսուցիչներն են եղել Մանուկ Աբեղյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Ստեփան Մալխասյանը եւ ուրիշներ:

1915թ. Հայոց ցեղասպանությունից փրկված մանուկներից շատերն ապաստան են գտնում Էջմիածնի որբանոցում, որի վարիչ է նշանակվում տակավին երիտասարդ Ավետիսը: Այդ ընթացքում նրա հետ ծանոթանում եւ նրա գործունեությունից մեծապես տպավորվում է հայ որբերին օգնություն կազմակերպելու նպատակով Էջմածին ժամանած Հովհ. Թումանյանը: 1917թ. փակվում է Գեւորգյան ճեմարանը:

1921թ. Ավետիս Ճուղուրյանը ներկայանում է Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողկոմին, որի ղեկավարն էր իր ուսուցիչը՝ Աշոտ Հովհաննիսյանը: Վերջինս, անձամբ ծանոթ լինելով Ավետիս Ճուղուրյանին, նրան գործուղեց Էջմիածին: Ավետիսը նշանակվեց թիվ 2 դպրոցի տնօրեն՝ միաժամանակ ստանձնելով տեղի լուսբաժնի մեթոդիստի պարտականությունները: Դպրոցում նա դասավանդում էր մի քանի առարկա՝ մայրենի լեզու, գրականություն, աշխարհագրություն, երգ-երաժշտություն եւ այլն:

Ավետիս Ճուղուրյանը մանկավարժական գործունեությանը զուգահեռ շարունակում է իր կրթությունը Երեւանի Պետական Համալսարանում՝ զուգահեռաբար ուսանելով աշխարհագրության եւ իրավաբանության ֆակուլտետներում:

Ավետիս Ճուղուրյանի մանկավարժական գործունեությունը չի սահմանափակվում միայն դպրոցում դասավանդելով. նա հեղինակ է վաթսունի հասնող դպրոցական դասագրքերի եւ ուղեցույցների: Ահա դրանցից մի քանիսը.

1. «Կյանք եւ աշխատանք», 1927, Երեւան
2. «Ընթերցարան մեծահասակների համար», 1937, Երեւան
3. «Հասարակագիտություն», 1938, Երեւան

---

1 Սմբատ Ճուղուրյանն ունեցել է յոթ զավակ:

2 «Ավանգարդ» 1967թ., մարտի 30

Նախկին ճեմարանավարտ սաների խորհրդի առաջին հավաքը
1968 թ. Էջմիածնում (ձախից առաջինը՝ Ավետիս Ճուղուրյան)

ՀԱՐԳԵԼԻ ԴՊՐՈՑԸՆԿԵՐ

Մեր սիրելի *alma mater* -ի գոյության 97-րդ տարեդարձը սովորականի նման կատարելու ենք Էջմիածնում, ճեմարանի շենքում: Հավաքում հիմնականում քննարկվելու են ճեմարանի կյանքի և գործունեության հետ կապված հարցեր: Ցանկալի է՝ հավաքին մասնակցող ընկերները ներկայանան համապատասխա նյութերով /նուշեր, նկարներ, փաստաթղթեր/ և Օգնեն ավելի հարուստ բովանդակությամբ դրսևորելու մեր սիրելի դպրոցի կյանքը նախապատրաստելու նրա հարյուրամյա գոյության մեծ հոբելյանը:

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ Օրը, հավաքին մասնակիցները հավաքվելու են Երևանի 4-րդ պոլիկլինիկայի շենքի առաջ, որտեղից՝ ժամը 10-ին ավտոբուսներով կշարժվենք դեպի Էջմիածին:

Լուսանկարելու հարմարություններ ունեցող ընկերներին խնդրվում է գալ համապատասխան պարագաներով՝ հավաքը լուսանկարելու համար:

10/9-81թ.

Երևան

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ
ՍԱՆ ՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՎ. ԾՈՒՂՈՒՐՅԱՆ

4. «Այբբենարան մեծահասակների համար», 1938, Երեւան
5. «Ինչպես օգնել երեխաներին, որ նրանք լավ սովորեն», 1955, Երեւան
6. «Այբբենարան» (կույրերի համար), 1959, Երեւան
7. «Հայրենի բնություն», 1971, Երեւան
8. «Այբբենարան», 1963, Երեւան

Գրքերից բացի, նա հեղինակում է նաեւ հարյուրից ավելի հոդվածներ եւ թարգմանություններ:

Համալսարանն ավարտելուց հետո՝ 1929թ. իր գործունեությունը շարունակում է Ստեփանավանում՝ որպես շրջանի լուսբաժնի վարիչ (1932-34 թթ.): Դրանից հետո արդեն իբրեւ ճանաչված մասնագետ հրավիրվում է մայրաքաղաք՝ 1934-39 թթ. ստանձնելով ՀԽՍՀ լուսժողկոմատի հանրապետական մեթոդկաբինետի վարիչի պաշտոնը: 1941-48 թթ. աշխատանքի է անցնում դպրոցների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես տնօրենի տեղակալ, իսկ 1948-75 թթ. դառնում է այդ հաստատության տնօրեն: Այդ ընթացքում՝ 1952-ին, պաշտպանում է ատենախոսություն՝ ստանալով մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Ավետիս Ճուղուրյանն իր բեղմնավոր գործունեության համար արժանացել է տարբեր շքանշանների եւ պատվավոր կոչումների (1945 թ. ճանաչվում է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ):

Ավետիս Ճուղուրյանը, հետճեմարանական տարիներին հասնելով փառքի, չի մոռանում իր «մայր դպրոցը»՝ Գեւորգյան ճեմարանը: Նա 1974 թ.՝ ճեմարանի 100-ամյակի առթիվ, գրում է «Ճեմարանի պատմությունը 1874-1917թթ.» աշխատությունը, որը դեռեւս անտիպ է: Ավետիս Ճուղուրյանը եղել է նաեւ ճեմարանի նախկին սաների խորհրդի նախագահը. կամավոր սկզբունքով են անդամակցել այս խորհրդին, որի առաջին հավաքը (մասնակցել են նաեւ Ներսիսյան դպրոցի նախկին սաները) տեղի է ունեցել Էջմիածնում՝ 1968 թ.: Խորհրդի հավաքների ժամանակ քննարկվել են ճեմարանի կյանքի եւ գործունեության հետ կապված տարբեր հարցեր:

Ավետիս Ճուղուրյանը մահացել է 1981թ. փետրվարի 16-ին՝ իրենից հետո թողնելով բարի անուն եւ հսկայածավալ գրական ժառանգություն: